ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.03.2021 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին։ (Զեկ. ամբիոնի վարիչներ)
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատում։ /Զեկ.՝ Կ. Պողոսյան/
3. Հաղորդում ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ և քննաշրջանի գրաֆիկի հաստատում։ /Զեկ.՝ Կ. Պողոսյան/
4. Հաղորդում 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին։ /Զեկ.՝ Կ. Պողոսյան/
5. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում։ (Զեկ. ԿԾ ղեկավարներ)
6. Ընթացիկ հարցեր։

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյան։ Զեկուցողը ներկայացրեց ամբիոններում կատարված քննարկումների արդյունքները։ Ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2020-2021 ուստարվա սեպտեմբերից։ Անհատական բեռնվածությամբ նախատեսված ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, կատարվել են ուղղումներ։ Ուսանողները ժամանակին տեղեկացվել են, և իրենց

նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն:

Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր դասախոսի հանդիպման ժամանակացույցը հաստատված է ամբիոնի կողմից և փակցված է հայտարարությունների տախտակին:

Զեկուցողը ավելացրեց, որ թե՛ ամբիոնները, թե՛ ավարտական աշխատանքների ղեկավարները անընդհատ իրենց ուշադրության կենտրոնում են պահում հարցը: Կարելի է ասել, որ աշխատանքների զգալի մասը ուսանողները արդեն կատարել են: Հստակեցված են աշխատանքի պլանը, կառուցվածքը, անհրաժեշտ գրականության ցանկը: Կան ուսանողներ, որոնք արդեն իսկ ավարտել են աշխատանքը և հանձնել ղեկավարին, իսկ մնացածները դեռևս շարադրման փուլում են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնային հաշվետվությունները ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատման կարգը: Նշվեց, որ 2020-2021 ուստարում չորս կրթական ծրագրերով ավարտական աշխատանքների պաշտպանություններ կիրականացվեն, որոնք նախատեսվում է անցկացնել մայիսին, բայց դեռևս հստակ չէ՝ ZOOM հարթակո՞ւմ,

թե՞ առկա: Զեկուցողը նշեց նաև, որ կարիք կա պաշտպանությունից առնվազը 2 շաբաթ առաջ մասնագիտական ամբիոնում կազմակերպել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը, ինչը սահմանված է ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգով: Զեկուցողը առաջարկեց 10-օրյա ժամկետում հստակեցնել պաշտպանության օրերը և ապրիլին կազմակերպել ավարտական աշխատանքների նախապաշտպանություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ. Ասիլյանը, Գ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններին հանձնարարել տասնօրյա ժամկետում ներկայացնել նախապաշտպանությունների և պաշտպանությունների օրերը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման ընթացքը, նշեց, որ քննություններն անցկացվելու են ZOOM հարթակում: Զեկուցողը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ավարտական կուրսերի հանրագումարային քննությունները նախատեսվում է իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /ապրիլի 05-ից մինչև ապրիլի 13-ը/: Նա նշեց, որ ժամանակացույցը քննարկվել է նաև ուսանողների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Գ. Մխիթարյանը, Մ. Մելիքսեթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման ընթացքը գնահատել բավարար:

2. Հաստատել 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ավարտական կուրսերի քննաշրջանի գրաֆիկները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը, նշեց, որ քննությունները հիմնականում անցկացվելու են ZOOM հարթակում: Բացառություններ կլինեն մի քանի փոքր խմբերի համար՝ հակահամաճարակային պայմանների պահպանմամբ՝ առարկայի առանձնահատկություններից ելնելով: Զեկուցողը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /ապրիլի 05-ից մինչև ապրիլի 10-ը/: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ. Ասիլյանը, Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին կրթական ծրագրի ղեկավարները: Զեկուցողները ներկայացրին կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները: Նրանք նշեցին,

որ ընդհանուր առմամբ կրթական ծրագրերը մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում, ժամանակին համընթաց կատարվում են անհրաժեշտ փոփոխությունները, և դրանք հիմնականում պատրաստ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ. Մնացականյանը, Գ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացվող աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ. .

Օրակարգի ընթացիկ հարցը վերաբերում էր 2020-2021 ուստարվա «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական ծրագրի թեզերի թեմաների հաստատմանը, որի մասին զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ նշված կրթական ծրագրով մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներին, ըստ ուսումնական պլանի, 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի սկզբում պիտի տրվեն ավարտական թեզի թեմաներ՝ համաձայն նախապես ընտրված մասնագիտացումների: Ըստ այդմ ՝ ունենք հետևյալ պատկերը. 9 ուսանող պետք է մագիստրոսական թեզ պաշտպանի «Աշխարհագրություն» մասնագիտացմամբ, 3-ական ուսանող՝ «Հայոց լեզու» և «Ֆիզիկա», 2-ական ուսանող՝ «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Անգլերեն լեզու» և «Կերպարվեստ» մասնագիտացումներով, 1 ուսանող՝ «Հայ գրականություն» մասնագիտացմամբ: Մագիստրոսական թեզի թեմաները բովանդակային առումով պետք է ունենան մեթոդական ուղղվածություն: Մասնագիտական ամբիոններում նախապես քննարկվել է թեզերի ղեկավարների հարցը, ապա նրանց կողմից առաջադրված թեմաները ներկայացվել և քննարկվել են մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար, մ.գ.դ. Հայկ Պետրոսյանի հետ: Արված մասնակի դիտողությունների հիման վրա կատարվել է թեմաների վերնագրերի

վերջնական շտկում: Առաջարկում ենք հաստատել դրանք և տրամադրել ուսանողներին: (***Կցվում է թեմաների վերնագրերի և ղեկավարների հավելվածը***):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ. Մնացականյանը, Գ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական ծրագրի թեզերի թեմաները հաստատել:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝	Վ. Աղաբաբյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ ՀԳ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ»

ԿԾ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

2020-2021 ուստարի

Ֆիզիկա

(ղեկ. Մակարյան Ա., Մարգարյան Ա., Աթոյան Մ., 3 ուսանող)

1. Դասավանդման ակտիվ մեթոդների կիրառումը էլեկտրականության թեմաների ուսուցման ժամանակ (Լուսինե Սիմոնյան)
2. Ֆիզիկայի դպրոցական դասընթացի խնդիրների տեսակները, դասակարգումը և լուծման մեթոդները (Աննա Մանուչարյան)
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունները դպրոցում ֆիզիկայի դասավանդման ժամանակ (Հասմիկ Մատինյան)

Մաթեմատիկա

(ղեկ. Այվազյան Է., 2 ուսանող)

1. Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառությունը միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի դասընթացում (Լիլիթ Հայրապետյան):
2. Ֆունկցիայի գաղափարի նախաուսուցումը 1-6 դասարանների մաթեմատիկայի դասընթացում (Ալվինա Փիրումյան):

Աշխարհագրություն

(ղեկ. Հովհաննիսյան Գ., Ալեքսանյան Գ., Ազիզյան Հ., Ասիլբեկյան Պ., 9 ուսանող)

1. Աշխարհագրությունն արտասահմանյան դպրոցներում (Աիդա Օթարյան)
2. Գործնական աշխատանքները դպրոցական աշխարհագրության ծրագրերում (Մարիամ Մելիքսեթյան)

3. Դպրոցական աշխարհագրության միջառարկայական կապերը (Օֆելյա Հարությունյան)
4. Աշխարհագրական նյութը դպրոցական ինտեգրված դասընթացներում (Իռա Ազիբեկյան)
5. Աշխարհագրության ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունը (Նարինե Համբարձումյան)
6. Սովորողների գիտելիքների ստուգումը աշխարհագրության դասաժամերին (Գայանե Սարգսյան)
7. Աշխարհագրական կրթության հայեցակարգերը և դպրոցական աշխարհագրության բովանդակության զարգացումը (Մերի Սարհատյան)
8. Աշխարհագրական օլիմպիադաները որպես սովորողների կոմպետենցիաների գնահատման ձև (Արփինե Մարդանյան)
9. Ուսումնական նախագծերն աշխարհագրության դասավանդման գործընթացում (Նազիկ Թամրազյան):

<u>Կերպարվեստ</u>

(ղեկ. Ֆլջյան Լ.,2 ուսանող)

1. Պատմական ժանրի գործառույթները կերպարվեստի դասերին (Մարգարիտա Աբազյան)
2. Բնօրինակից նկարչությունը որպես կերպարվեստի ուսուցման ձև դպրոցում (Մարիամ Սարհատյան):

<u>Հայոց լեզու</u>

(ղեկ. Սարհատյան Ա., Թումանյան Լ., 3 ուսանող)

1. Նախադասության անդամների ուսուցումը (Կարինե Սարուխանյան)
2. Հայերենի հոլովման համակարգը (Հերմինե Մինասյան)
3. Բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը դպրոցում (Մելինե Բաղդասարյան):

Հայ գրականություն

(ղեկ. Հասանյան Ա.,1 ուսանող)

1. Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի ուսուցման առանձնահատկությունները (Դիանա Սայան):

Անգլերեն լեզու

(ղեկ. Հարությունյան Ք., 2 ուսանող)

1. Լսարանային աշխատանքներ օտար լեզվի համագործակցային ուսուցման համար (Իրինա Խալաթյան):
2. Օտար լեզվի հաղորդակցական դասավանդման սկզբունքները (Սաթիկ Բայրամյան):

Ռուսաց լեզու

(ղեկ. Մարտիրյան Ն., 2 ուսանող)

1) Методика обучения практической грамматике русского языка в школе

Ռուսաց լեզվի գործնական քերականության ուսուցման մեթոդները դպրոցում (Ալինա Եգանյան):

2) Интерактивные методы обучения русскому языку как иностранному

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործընթացում (Շահանե Գասպարյան):